

գուլումին ամենօրեայ ու ալ սովորական դարձած դրուագներէն մէկը: Գաւառացի առեւանգուած աղջկան յաիտեւնական պատմութիւնն է առ: Մարիամ պանծիին աղջիկը, Սրման առեւանգուած է. մայրը, լալագին եւ անճրկած, կը դիմէ առաջնորդական տեղապահին, գերագոյն յոյսին: Տեղապահը որ հեռի է իր հոտին ցաւերն հասկնալէ եւ անոնց դարման տանելու մտահոգութենէն, կը նեղսրտի, կը բարկանայ իր հոգեհատորին փրկութիւնը աղերսող այդ մօր վայնասունէն. արդարեւ, ի՛նչ գլխացաւ, ատոր համար արուէ՛ր կուսակալին հետ որ պիտի յաջողցնէր իր առաջնորդական պաշտօնը. ծառան կը կանչէ եւ դուրս հանել կուտայ Մարիամը որ, այս անգամ, կը դիմէ նոյն ինքն առեւանգիչին. բայց ո՛վ կը լսէ իր աղերսին, իր աղեխարշ լացուկոծին. նորէն անկարեկիր է իր անմարելի կրակին. «Աղջիկդ իր կամքովը տաճկցեր է, մե՛նք ինչ ընենք» կը պոռայ:

– Սո՛ւտ է, կը պատասխանէ մայրը: Թողունք որ անարատ, գառայ պէս մէտումակս գալին բերա՞նն երթայ:

– Գա՛ն ինչ է, գառնո՛ւկն ինչ է, տաճկցեր է, հասկցար:

– Մի բարկանար, խուրպան հայրսուրբ, չի մարելիք կրակ է ասիկա, անանց կրակ է, մեր տարտը ձեզի չլանք, որո՞ւ լանք:

– Մենք ազգ չենք, կը պոռայ վարդապետը, մենք ձեր ցաին տէրման չենք կրնար ըլլալ, վէսէլլամ. հոս նստած չենք մենք որ էտէպսիզներուն երեսէն պէլայի հանդիպինք:

– Հայր սուրբ, աղջիկս կ’ուզե՛մ, կը ծառանայ մայրը էգ վագրի մոլեգնութեամբ:

– Վայ շուն... դո՛ւրս:

Եւ բարապանը բրտօրէն դուրս կը նետէ հայ մայրը...

Ասիկա ոչ առասպել է, ոչ ցնորական դրուագ. իրականութիւնն է վայրագ ու քստմնելի. առջի րէժիմին այս ընդունելութեան կ’արժանանային համիտեան բռնութեան արիւնլուայ հայ գոհերը հայ առաջնորդարաններու մէջ. եւ այն ատենուն Հայոց մեծափառ պատրիարքն ալ արդէն այս ձեւով, իր բարապաններուն ձեռքովը,